

Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականություն վրա հիմնված ոչ խտրականություն

---

- I. Ընդհանուր քաղաքականություն
- II. Կիրառելիությունը
- III. Սահմանումներ
- IV. Ծանուցում ողջամիտ բնակեցման քաղաքականության վերաբերյալ
- V. Ծրագրի մատչելիությունը
- VI. Ողջամիտ բնակեցման օրինակներ
- VII. Արգելված բնակեցում
- VIII. Ողջամիտ բնակեցման հայց
- IX. Հայց մեղմացնող հանգամանքները քննարկելու համար
- X. Բնակեցման հայցի մերժման պատճառներ
- XI. Արձագանք հայցին
- XII. Բողոքներ
- XIII. Վերահսկում և արձանագրություններ

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

- I. Ընդհանուր քաղաքականություն
- A. Լոս Անջելես Քաղաքի Բնակարանավորման Իշխանության (HACLA) քաղաքականությունը պետք է լիովին համապատասխանի հետևյալին. Արդար Բնակարանավորման Ակտ, Վերականգնողական Ակտ 1973, Բաժին 504, Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների Ակտ, Սոսիալ Ակտ, Կալիֆոռնիայի Արդար Աշխատանք և Բնակարանավորման Ակտ: Քաղաքականությունը ներառում է այդ օրենքների և կիրառելի կանոնակարգերի պահանջները:
- B. HACLA-ն ձգտում է ապահովել հավասար հնարավորություններ բոլոր անձանց համար (ներառյալ հաշմանդամ անձանց և ընտանիքներ, որոնք ունեն հաշմանդամ անդամ), որպեսզի նրանք մասնակցեն և օգտվեն HACLA-ի կողմից իրականացվող ծրագրերից: HACLA-ն կտրամադրի ողջամիտ բնակեցում իր բոլոր ծրագրերի ունեցվածքի և կառույցների շրջանակներում՝ համապատասխան այս քաղաքականությանը: HACLA-ն կձգտի բացահայտել և վերացնել այն պայմանները, որոնք խոչընդոտ են ստեղծում հավասար հնարավորությունների համար, և, հնարավորության դեպքում, կիրականացնի ֆիզիկական և ընթացակարգային փոփոխություններ, որպեսզի ողջամտորեն բնակեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց:
- C. HACLA-ն մանրամասնորեն և արագ կուսումնասիրի բնակեցման հայցերը և կբացատրի ցանկացած մերժման հիմքը:
- D. HACLA-ն կուսումնասիրի ողջամիտ բնակեցման հայցերը ըստ յուրաքանչյուր դեպքի: Չկա հաճախորդի կողմից ողջամիտ բնակեցման դիմումների քանակի ոչ մի սահմանափակում:
- E. Հաճախորդի պատասխանատվությունն է բացահայտել բնակարանի տեսակը, որը լավագույնս կբավարարի իր հաշմանդամության կարիքները: Հաճախորդները խրախուսվում են հայտնել այլընտրանքային բնակարանների մասին, որոնք կբավարարեն իրենց կարիքները: HACLA-ն կարող է բանակցությունների մեջ մտնել Հաճախորդի հետ, որպեսզի բացահայտի այլընտրանքային բնակարանները, եթե նախնական հարցումը ողջամիտ չէ:

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

- F. Իր շուկայավարման/հանրայնացման ծրագրի միջոցով HACLA-ն ձգտում է գրավել ցածր եկամուտ ունեցող ընտանիքների, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձ/անձանց, լայն հատված:
- G. Հաշմանդամություն ունեցող Հաճախորդի կամ ընտանիքի հաշմանդամ անդամի կողմից ներկայացված պահանջի դեպքում HACLA-ն կիրականացնի Հաճախորդների համար մատչելի գրավոր հաղորդակցություններայնպիսի այլընտրանքային ձևաչափերով, ինչպիսին են Բրայլի այբուբենը, խոշոր տպագրեր, աուդիո կամ էլեկտրոնային ձևաչափեր:
- H. Պլանավորման Տնօրենը պետք է նշանակվի որպես Մատչելիության Համակարգող (Բաժին 504) HACLA-ի համար և պատասխանատու կլինի իրավասու գործունեության համակարգման և հաշվառման համար, ինչպես նաև կլինի բնակեցման հետ կապված բողոքների վերաբերյալ վերջնական որոշում կայացնողը:

## II. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Այս քաղաքականությունը վերաբերում է HACLA ծրագրերի բոլոր հաճախորդներին, ընդգրկելով, առանց սահմանափակման.

- Հանրային (կամ Պայմանական) Բնակարանավորման Ծրագիր
- Բաժին 8 Բնակարանավորման Ընտրովի Վաուչեր Ծրագիր
- Բաժին 8 Նոր Շինարարություն Բնակարանավորման Օգնության Վճարների Ծրագիր
- McKinney Vento Ծրագրեր (Shelter Plus Care և HOPWA)
- HACLA-ի կողմից ղեկավարվում են այլ ծրագրեր (բնակարանավորման և ոչ-բնակարանավորման): Ոչ-բնակարանավորման ծրագրերը, առանց սահմանափակման, ընդգրկում են Ռեզիդենտ Ծառայություններ բաժնի կողմից տրամադրվող այդ ծառայությունները/ծրագրերը:

## III. Սահմանումներ (շարադրված է այբենական կարգով)

### 1. Հաճախորդ

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականություն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

Այս քաղաքականության նպատակի համար, Հաճախորդ համարվում է ներկա կամ նախկին. դիմողը, մասնակիցը կամ HACLA-ի բնակարանավորման կամ ոչ-բնակարանավորման ծրագրի բնակիչը:

**2. Հաշմանդամություն ունեցող անհատներ**

Հաշմանդամություն ունեցող անհատներ են սահմանվում անձիք, որոնք ունեն ֆիզիկական կամ մտավորխանգարում, որը սահմանափակում է մեկ կամ ավելի հիմնական կենսագործունեության տեսակներ; ունեն նման խանգարման արձանագրում; կամ համարվում են նման խանգարում ունեցող:

Տերմինը չի ներառում ակոհոլ կամ թմրանյութ չարաշատո դրևե անհատ, ում ակոհոլի կամ թմրանյութի ներկա օգտագործումը խոչըդոտում է անհատի մասնակցությունը ծրագրին կամ գործունեությանը, կամ ում մասնակցությունը, առկա ակոհոլի կամ թմրանյութի չարաշահման պատճառով, ուղղակի սպառնալիք կհանդիսանա ուրիշների սեփականության կամ անվտանգության համար:

**a) Ընտանիք, որն ունի հաշմանդամ անդամ**

Սույն գլխում, ընտանիք, որն ունի հաշմանդամ անդամ տերմինը նշանակում է ընտանիք, որը բաղկացած է. 1) միանձյա հաշմանդամ անդամից կամ 2) մի քանի անդամներ, որից առնվազն մեկը հաշմանդամ է

**b) Ունի նման խանգարման արձանագրում**

Նշանակում է, ունի պատմություն կամ սխալ դասակարգվել է որպես մտավոր կամ ֆիզիկական խանգարում ունեցող, որը սահմանափակում է մեկ կամ ավելի հիմնական կենսագործունեության տեսակ:

**c) Համարվում է նման խանգարում ունեցող**

1) Ունի ֆիզիկական կամ մտավոր խանգարում, որը չի սահմանափակում մեկ կամ ավելի հիմնական

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

կենսագործունեության տեսակներ, սակայն HACLA-ի կողմից դիտվում է որպես նման սահմանափակում ունեցող:

- 2) Ունի ֆիզիկական կամ մտավոր խանգարում, որը սահմանափակում է մեկ կամ ավելի հիմնական կենսագործունեության տեսակ՝ միայն որպես HACLA-ի անձնակազմի վերաբերմունքի արդյունք նման խանգարման նկատմամբ; կամ
- 3) Չունի որևէ խանգարում, սակայն HACLA-ի անձնակազմի կողմից դիտվում է որպես խանգարում ունեցող:

d) Հիմնական կենսագործունեություն

Հետևյալ գործառույթները, որոնք սակայն չեն սահմանափակվում. խնամք ինքն իր նկատմամբ, մանուալ առաջադրանքների կատարում, քայլել, տեսնել, լսել, խոսել, շնչել, սովորել և աշխատել:

3. Ապրուստի օգնական

Ապրուստի օգնականը այն անձն է, որն ապրում է մեկ կամ ավելի տարեց անձանց, գրեթե տարեց անձանց կամ հաշմանդամ անձանց հետ, և որը.

- (1) Համարվում է կարևոր այդ անձանց խնամքի և բարեկեցության համար;
- (2) Պարտավորված չէ այդ անձանց աջակցության համար և
- (3) Չէր ապրի միավորի մեջ, բացառությամբ, ապահովելու համար անհրաժեշտ աջակցող ծառայություններ:

Ըստ HUD ուղեցույցի, Բաժին 8 ծրագրի համար, պատահական, ընդմիջվող, բազմակի կամ փոխարինող խնամողները համարվում են հյուրեր կամ ծառայողներ, ոչ ապրուստի օգնական(ներ) - HUD 50058 ցանկում ընդգրկվելու նպատակով:

4. Մեղմացնող հանգամանքներ

Հաշմանդամության հետ կապված իրավիճակ, որն ազդում է անհատի կամ ընտանիքի ունակության վրա համապատասխանել HACLA ծրագրի պահանջներին և հասցնում է HACLA-ի կողմից Հաճախորդի նկատմամբ

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

բացասական գործողության: Բացասական գործողության օրինակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում. վտարում, դադարեցում, հեռացում սպասողների ցուցակից կամ վաուչերի չեղյալացում:

5. Ներքուս

Կապ կամ օղակ նշված հաշմանդամության և բնակեցման հայցի միջև:

6. Մատակարար/Աշխատող

Մատակարար/Աշխատողը վստահելի երրորդ կողմն է, որը սահմանվում է, սակայն չի սահմանափակվում.

«Մատակարար»-ը բժշկական կամ հոգեկան առողջության խնամողն է, ով հաշմանդամության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տալու որակավորում ունի: Մատակարարները, առանց սահմանափակման, ընդգրկում են. լիցենզավորված բժիշկ, թերապևտ կամ հոգեբույժ:

«Աշխատող»-ը, առանց սահմանափակման, ընդգրկում է. սոցիալական աշխատող, պետական կամ մասնավոր գործակալության խորհրդատու, ով տեղյակ է անհատի հաշմանդամության մասին:

7. Ողջամիտ բնակեցում

Ողջամիտ բնակեցումը փոփոխություն, բացառություն կամ ճշգրտում է, որն արվում է HACLA-ի կողմից իր կանոնների, քաղաքականությունների, փորձերի, ընթացակարգերի կամ իր բնակարանային միավորների կամ ընդհանուր տարաքների նկատմամբ, ինչը հաշմանդամություն ունեցող անձին հավասար հնարավորություն կտա մասնակցելու HACLA-ի կողմից կառավարվող ծրագրերին և օգուտ ունենալ դրանցից:

Ողջամիտ բնակեցումը չի ընդգրկում բնակեցումներ, որոնք կպահանջեն HACLA-ի գործունեության կամ ծրագրի կանոնների բնույթի հիմնարար փոփոխություն կամ կստեղծեն անհարկի ֆինասնական կամ վարչական դժվարություններ:

Պետք է լինի ճանաչելի կապ ("nexus") նշված բնակեցման հայցի և անհատի հաշմանդամության միջև:

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

IV. ԾԱՆՈՒՑՈՒՄ                    ՈՂՋԱՄԻՏ                    ԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- A. Յուրաքանչյուր HACLA-ի գործարար գրասենյակ կփոխանցի ընթացիկ HACLA Ոչ-խտրականության Ծանուցում (S504-01), որը տրամադրում է տեղեկատվություն HACLA-ի ողջամիտ բնակեցման քաղաքականության մասին և բնակեցման օրինակներ, որին կարող է դիմել ծրագրի մասնակիցը: Անհրաժեշտության դեպքում, Ծանուցագիրը և/կամ այս քաղաքականության պատճեն կարող են հասանելի լինել այլընտրանքային ձևաչափով՝ ըստ հաշմանդամություն ունեցող անձի պահանջի:
- B. Քաղաքականության, ընթացակարգերի և ձևերի պատճենները հասանելի կլինեն HACLA-ի Intranet/Internet և յուրաքանչյուր ծրագրի գրասենյակում:
- C. Ծանուցագիրը և Հատուկ Կարիքների Հարցաշարը (S504-02), ձև, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս պահանջել ողջամիտ բնակեցում, կտրաադրվեն կրկնակի քննության փաթեթներում, դիմումներում, վաուչերների թողարկման նիստերի, բնակիչների կողմնորոշման և Ռեզիդենտ Ծառայություններ ծրագրի կողմնորոշման ժամանակ: Հաճախորդի խնդրանքով ձևերը կարող են տրամադրվել ցանկացած ժամանակ:
- D. Բաժին 8 անձնակազմը, Բնակարանավորման Ծառայությունների անձնակազմը և/կամ Ռեզիդենտ Ծառայությունների անձնակազմը կտրամադրեն տեղեկատվություն ողջամիտ բնակեցման պահանջի ընթացքի վերաբերյալ, ձևերը, որոնք օգտագործվում են դիմելու համար ողջամիտ բնակեցմանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, կտրամադրվի աջակցություն՝ ձևերը լրացնելու համար:

V. ԾՐԱԳՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

- A. **Ոչ-բնակարանային կառույցներ:** Նոր ոչ-բնակարանային կառույցները հասանելի և օգտագործելի կլինեն հաշմանդամություն ունեցող անհատների համար: Գոյություն ունեցող կառույցները հասանելի են հաշմանդամություն ունեցող անհատների համար հնարավոր չափով

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականություն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

(HACLA-ի գործունեության վրա չդնելով զգալի ֆինանսական և վարչական բեռ):

- B. Նոր շինարարություն:** Նոր բազմաբնակարան ծրագրերը հասանելի և օգտագործելի կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ըստ գործող օրենքի և կիրառվող կանոնակարգի պահանջի: Հանրային բնակարանային միավորումների համար ընդհանուր բնակելի միավորի առնվազն հինգ տոկոսը հասանելի կլինի շարժունակության խանգարում ունեցող անձանց համար և միավորումների լրացուցիչ երկու տոկոսը հասանելի կլինի լսողական և տեսողական խանգարում ունեցող անձանց համար:
- C. Փոփոխություններ HACLA-ին պատկանող գոյություն ունեցող բնակարանավորման մեջ:** Քանի որ գոյություն ունեցող բնակարանային շինությունները, որոնք ունեն 15 և ավելի միավոր, փոփոխությունների են ենթարկվում, իսկ փոփոխությունների արժեքը առնվազն 75 տոկոսով մեծ են փոխարինման ծախսերից, HACLA կփոփոխի իր միավորները ըստ բնակչության կարիքների: Միավորների ողջամիտ փոփոխություններ բնակչի համար կարվեն անվճար, եթե նահապաստի իր հաշմանդամության առնչությամբ ձևափոխությունների անհրաժեշտությունը, համաձայն դաշնային օրենքի: Անձինք, ովքեր հաշմանդամություն ունեն, համաձայն CAL-FEHA-ի, բայց ոչ դաշնային օրենքի, կարող է դիմել HACLA-ին, որպեսզի միավորի փոփոխություններն արվեն բնակչի սեփական միջոցների հաշվին:
- D. Վարձակալի հիմքով Բաժին 8 վարչության ծրագրեր:** HACLA-ն խրախուսում է սեփականատերերին հասանելի միավորումներ և ողջամիտ բնակեցում տրամադրել Բաժին 8 Ծրագրի դիմորդներին և մասնակիցներին: Հաշմանդաման անդամ ունեցող ընտանիքը կարող է պահանջել սեփականատիրոջ հաստատումը միավորի փոփոխության համար: Հաճախորդները խրախուսվում են խորհրդակցել հաշմանդամության իրավունքների մասնագետի հետ և/կամ այցելել HACLA-ի կայքը [www.hacla.org/504](http://www.hacla.org/504) ստանալու համար տեղեկատվություն միավորի/ընդհանուր տարածքի փոփոխությունների վերաբերյալ վարձակալի/ տանտիրոջ պատասխանատվությունների մասին:



**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականություն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

- E. Հանրային հանդիպումներ:
1. Հնարավորության լայն սահմաններում, հանրային հանդիպումները տեղի կունենան հասանելի վայրերում:
  2. Ողջամիտ բնակեցումը հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի կլինի ըստ պահանջի:
    - a. Ժեստերի լեզվի մեկնաբանման համար պետք է դիմել ծրագրված հանդիպումից առնվազն հինգ (5) աշխատանքային օր առաջ, ապահովելու համար դրա առկայությունը: Հայցերն, որոնց ավելի ուշ են ներկայացվել, լուծում կստանան հնարավոր չափով:
    - b. Հանդիպումներ վերաբերյալ ծանուցումները կընդգրկեն կոնտակտային տեղեկություն՝ բնակեցման հայցի համար:

VI. ՈՂՋԱՄԻՏ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Սույն ներկայացվում են ողջամիտ բնակեցման օրինակներ, սակայն սա բացառիկ ցուցակը չէ:

- A. Եթե հաշմանդամություն ունեցող անձը հաշմանդամության պատճառով չի կարող այցելել գրասենյակ, HACLA-ի անձնակազմի անդամը կարող է Հաճախորդի պահանջով.
1. Վերացուցակագրի հարցազրույցը՝ հարմարացնելու համար այն ընտանիքի կարիքներին;
  2. Անցկացնի հարցազրույցը հեռախոսով և փոստով ուղարկի փաստաթղթերը ընտանիքին ստորագրության (ների) համար; կամ
  3. Պլանավորի ոչ-գրասենյակային այցելություն (օրինակ, այցելություն տուն կամ ծերանոց):
- B. Եթե հաշմանդամություն ունեցող անձը դժվարություններ ունի ձևերը հասկանալու կամ լրացնելու ժամանակ, HACLA-ի անձնակազմը, պահանջի դեպքում, պարտավոր է աջակցել

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականություն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

անհատինկամ խորհուրդ տալ հաշմանդամ անձին իր հետ բերել որևէ մեկին, ով կաջակցի իրեն հարցազրույցի ընթացքում:

- C. Եթե հաշմանդամ անձը ունի լսողական խանգարում, HACLA-ն պարտավոր է տրամադրել ժեստերի լեզվի մեկնաբան, եթե պահանջը ներկայացվել է նախօրոք՝ հինգ (5) աշխատանքային օր առաջ:
- D. Եթե հաշմանդամ անձը ունի տեսողական խանգարում, պահանջի դեպքում, HACLA-ի անձնակազմը պարտավոր է.
  - 1. Աջակցի որպես ընթերցող՝ ձևերը լրացնելու ժամանակ;
  - 2. Հնարավորություն տալ ձայնագրել հարցազրույցը;
  - 3. Թույլատրել անհատին բերել որևէ մեկին իրեն աջակցելու համար, կամ
  - 4. Տրամադրել այլընտրանքային ձևաչափի նյութեր, ինչպիսիք են խոշոր տպագիր փաստաթղթեր:
- E. Տրամադրել տարածք՝ տեղավորելու համար աջակցող կենդանուն կամ սարքը:
- F. Վերաթողարկել վաուչերը, որպեսզի ընտանիքը կարողանա տեղորոշել մի միավոր, որն ունի անհրաժեշտ մատչելիության հատկանիշներ:
- G. Երկարաձգել վաուչերի որոնման ժամանակը, որպեսզի ընտանիքը կարողանա տեղորոշել անհրաժեշտ մատչելիության հատկանիշներով միավոր:
- H. Տրամադրել ավելի մեծ չափի նպաստ վարձակալելու համար ավելի մեծ ննջասենյակով միավոր, որպեսզի հարմարացնել հատուկ կարիքները, ինչպիսիսն են մատչելիությունը, ապրուստի օգնականը, փոխարինող խնամողները կամ մեծ բժշկական սարքավորումները:
- I. Բացառություն անել Fair Market Rents կամ Voucher Payment Standards, որպեսզի թույլատրել ընտանիքին վարձել իր համար հասանելի միավոր:

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

- J. Ապահովել բացառություն «վարձակալում բարեկամներին կանոն»-ին:
- K. Ապահովել բացառություն HACLA-ի միավոր հյուր քաղաքականությանը՝ խնամողների փոփոխելու համար:
- L. Ժամանակ և/կամ աջակցություն տրամադրել HACLA-ի միավորի պատրաստմանը՝ անկողինը փայտոջիլների դեմ մշակելու համար:
- M. Իրականացնել ֆիզիկական փոփոխություններ ընդհանուր տարածքում:
- N. Հասանելի միավորներ

Միավորների փոփոխության օրինակները, առանց սահմանափակման, ընդգրկում են հետևյալը.

1. Լիովին հասանելի միավոր:
2. Միավոր, համալրված ծխի ահազանգով և/կամ այլ հարմարություններով, ինչպիսիք են փայլող դռան զանգ՝ նախատեսված լսողական խանգարում ունեցող անձանց համար:
3. Ավտոմատ բացվող/փակվող բռներ, բազրիքներ կամ լծակով բարձրացող բռնակներ՝ դռների և լվացարանների գնդաձև բռնակների փոխարեն:
4. Եթե հանրային տնային տնտեսության ընտանիքում առկա է հաշմանդամ անդամ, որն ողջամիտ բնակեցման կարիք ունի, իսկ ներկա միավորը հնարավոր չէ ողջամիտ ձևափոխել, ապա բնակչին կառաջարկվի տեղափոխվել հարմար միավորում՝ ըստ տեղափոխման ընթացակարգի, որը շարադրված է Ընդունելություններ և Շարունակական Վարձակալության Քաղաքականության մեջ (MPP 201:1):

VII. ԱՐԳԵԼՎԱԾ ԲՆԱԿԵՑՈՒՄՆԵՐ

Հետևյալ բնակեցումները արգելված են դաշնային կանոնակարգով:

- A. Բժշկական մարիխուանա

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականություն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

HUD-ը սահմանել է, որ բժշկական մարիխուանայի օգտագործումը, որը թույլատրվում է պետական օրենքով, զրկվում է պաշտպանվածության իրավունքից Հաշմանդամ Ամերիկացիներ Ակտի և Վերականգնողական Ակտի Բաժին 504-ի համաձայն:

**B. Համատեղ բնակարանավորում**

Բնակարանային միավորներ, որտեղ սեփականատերը բնակվում է միավորում և արյունակցական կամ ամուսնական կապ ունի Բաժին 8 վաուչեր կրողի հետ, չեն կարող զբաղեցվել Բաժին 8 վաուչեր կրողի կողմից, որպես ողջամիտ բնակեցում:

**VIII. ՈՂՋԱՄԻՏ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՅՑ**

HACLA -ն հավասար ուշադրություն կդարձնի ողջամիտ բնակեցման հայցին, նույնիսկ, երբ այն կատարվել է բանավոր կամ այլ HACLA-ի ստանդարտ ձևերին չհամապատասխանող դիմումի ձևերով:

Հաճախորդը կարող է պահանջել ողջամիտ բնակեցում ցանկացած ժամանակ:

- A.** Հաճախորդը կարող է պահանջել ողջամիտ բնակեցում՝ ներկայացնելով Ողջամիտ Բնակեցման Հարցաշարը (S504-02) կամ ընթացիկ պահանջի ձևը, կամ այլ գրավոր կամ բանավոր ձևաչափով, որը տրամադրում է պահանջվող պատշաճ տեղեկություն: Հարցաշարի (S504-02) ձևը ներառված է դիմումի և եկամուտի կրկնակի քննության փաթեթներում: Հաճախորդը կարող է պահանջել ձևը HACLA-ի անձնակազմից և ներկայացնել այն որևէ այլ անհրաժեշտ ժամանակ:
- B.** Բացառությամբ այն իրավիճակների, երբ Հաճախորդը կարող է ինքնուրույն հավաստագրել, ինչպես նշված է ստորև բերված Բաժին D-ում, հաշմանդամության և պահանջվող բնակեցման միջև կապը, այն պետք է հաստատվի Մատակարարի/Սպասարկողի կողմից, որը նշված է անհատի կողմից Հարցաշարի ձևում (S504-02): Հաճախորդը կարող է տրամադրել այլ ընդունելի փաստաթղթեր համապատասխան HACLA-ի ստուգման հիերարխիայի:
- C.** Այլ ընդունելի փաստաթղթերը, առանց սահմանափակման, ներառում են նամակ HACLA-ին Մատակարարի/Սպասարկողի կողմից՝ իր բլանկի վրա: Նման փաստաթղթերը կընդունվեն Հավաստագրման ձևի (S504-

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

03) փոխարեն, եթե փաստաթղթերը նույնացնում են. 1) անհատին, որպես հաշմանդամություն ունեցող անձ, 2) պահանջվող բնակեցումը, և 3) կապը հաշմանդամության և պահանջվող բնակեցման միջև:

D. Որպես երրորդ կողմի կողմից հաստատման պրոցեսի այլընտրանք, հաշմանդամ անձը կարող է ինքնուրույն վկայել իր հաշմանդամությունը և իր բնակեցման կարիքը, եթե առկա են հետևյալ պայմանները.

1. Անհատը ունի բացահայտ և/կամ տեսանելի հաշմանդամություն (ինչպիսիք են անհատն, ով կանոնավոր օգտագործում է ճոնիկ կամ անհատ, որն ունի լսողական խանգարում) և
2. Պահանջվող բնակեցումը հստակ կապված է անհատի հաշմանդամության հետ (օրինակ, շարժունակության խանգարում ունեցող անձը պահանջում է ավտոմատ բացվող/փակվող բառ կամ լսողական խանգարումով անձը պահանջում է ժեստերի լեզվի մեկնաբան):

**IX. ՀԱՅՑ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

A. Ընտանիք, որն ունի հաշմանդամ անդամ, ով մերժվում/ կամ մերժվել է, ում հետ դադարեցվել է HACLA-ի ծրագիրը, կամ վտարվել է HACLA-ին պատկանող տնային տնտեսությունից ընտանիքի գործողության կամ անգործունեության պատճառով, կարող է պահանջել մեղմացնող հանգամանքների քննարկում՝ կապված իր հաշմանդամության հետ:

B. Մեղմացնող հանգամանքներին վերաբերող փաստերը պետք է ստուգվեն համապատասխան MMP 125:1, Բաժին VII-ում նշված ընթացակարգի:

C. Տրամադրված փաստաթղթերի հիման վրա, մեղմացնող հանգամանքներ շնորհվում են, եթե.

1. Ընտանիքի գործողությունը կամ անգործունեությունը եղել է ընտանիքի անդամի հաշմանդամության պատճառով; և
2. Անձի հետ կապված ողջամիտ բնակեցումը թույլ կտա անձին կատարել ծրագրի պարտավորությունները և պահանջները:

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

- D. Ընտանիքից կարող է (անհրաժեշտության դպքում) պահանջվել համաձայնության գալ HACLA-ի հետ այն պայմանով, որ ընտանիքը հետևողական կլինի ապահովելու համար անհրաժեշտ իրավասության պահանջների բավարարումը և պահպանումը՝ հատուկ ծրագրում մասնակցելու համար:
- E. Եթե մեղմացնող հանգամանքների շնորհիվ ողջամիտ բնակեցում շնորհելուց հետո ընտանիքի կողմից կրկնվում է գործողություն կամ անգործունեություն, դա կարող է հանգեցնել մերժման, դադարեցման կամ վտարման: Ինչևէ, HACLA-ն կգնահատի ցանկացած հետագա ողջամիտ բնակեցման հայցեր դեպք առ դեպք, նույնիսկ երբ Հաճախորդը նախկինում ստացել է բնակեցում կապված գործողության կամ անգործունեության հետ, որոնք խախտել են ծրագրի կանոնները:

X. ԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՅՑԻ ՄԵՐԺՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սույն ներկայացվում են պատճառներ ողջամիտ բնակեցման հայցի մերժման համար.

- A. Ուղղակի վտանգ է ներկայացնում այլ անհատների առողջության և անվտանգության համար;
- B. Էական ֆիզիկական վնաս է հասցնում ուրիշների ունեցվածքին;
- C. Հանգեցնում է ծրագրի հիմնարար փոփոխության;
- D. Շնորհվելու դեպքում անտեղի վարչական կամ ֆինանսական բեռ է ստեղծում;
- E. Չկա հստակ կապ (nexus) հաշմանդամության և պահանջվող բնակեցման համար;
- F. Անհնար է հաստատել հաշմանդամության առկայությունը այն դեպքերում, երբ հաշմանդամությունը ակնհայտ չէ;
- G. Հաճախորդին չի հաջողվում տրամադրել տեղեկություն կամ փաստաթղթեր, ինչպես պահանջվում է HACLA-ի կողմից (դեպքը կարող

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

է կրկին քննարկվել, երբ տրամադրվեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը), կամ

H. Նախկինում շնորհվել է բնակեցում, սակայն արդյունավետ չի եղել հաշմանդամություն ունեցող անձին հնարավորություն տալ բավարարելու ծրագրի՝ օրենքով սահմանված իրավասության պահանջները:

XI. ԱՐՁԱԳԱՆՔՉԱՅՅԵՐԻՆ

A. HACLA-ն անմիջապես կարճազանքի ողջամիտ բնակեցման կամ մեղմացնող հանգամանքների քննարկման վերաբերյալ գրավոր դիմումին՝ իր որոշմամբ կամ լրացուցիչ տեղեկության պահանջով, որը չպետք է գերազանցի 30 օրացուցային օր հաստատումը(ները) ստանալուց հետո:

B. Երբ հայց է ներկայացվել լրացուցիչ տեղեկատվություն համար, Հաճախորդը պետք է պատասխանի այդ հայցին 15 օրացուցային օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են մեղմացնող հանգամանքներ:

Հայցը կարող է կրկին քննարկվել, եթե փաստաթղթերը ստացվել են նշված վերջնաժամկետից հետո:

C. Անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալուց հետո, HACLA-ն կպատասխանի 30 օրացուցային օրվա ընթացքում, բացառությամբ դեպքերի, երբ առկա են մեղմացնող հանգամանքներ: Նման հետաձգման դեպքերում HACLA-ն գրավոր կտեղեկացնի Հաճախորդին՝ ինչու է իրեն պահանջվում լրացուցիչ ժամանակ հայցին պատասխանելու համար:

D. HACLA-ն հաշվի կառնի Հաճախորդի հաշմանդամությունը և դրա ազդեցությունը Հաճախորդի՝ ժամկետներին համապատասխանելու կարողության վրա:

XII. ԲՈՂՈՔՆԵՐ

**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականություն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

HACLA-ն կտրամադրի երկու քայլից բաղկացած Բողոքարկման պրոցես: Առաջին քայլը Դիմումն է Բաժնի Տնօրենին կամ նրա կողմից նշանակված մեկին (ինչպիսիք են Բաժնի 8 Տնօրենը, Բնակարանավորման Ծառայությունների Տնօրենը, Ակտիվների/Դրամաշնորհների Կառավարման Տնօրենը կամ LOMOD տնօրենը) և վերջին քայլը՝ Բողոքն է Մատչելիության Համակարգողին:

**A. Առաջին քայլ. Դիմում**

1. Եթե ողջամիտ բնակեցման հայցը մերժվում է կամ Հաճախորդը կարծում է, որ նա խտրականության է ենթարկվել իր հաշմանդամության պատճառով, Հաճախորդը սկզբում կարող է դիմում ներկայացնել համապատասխան Բաժնի Տնօրենին: Դիմումը պետք է ներկայացվի գրավոր, և HACLA-ն այն պետք է ստանա 30 օրացուցային օրվա ընթացքում այն բանից հետո, երբ Հաճախորդը տեղեկացվել է նախնական մերժման կամ խտրականության դեպքի վերաբերյալ:
2. Համապատասխան Տնօրենը (կամ իր կողմից նշանակված մեկը) պետք է վերանայի գործը և, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցի Մատչելիության Համակարգողի հետ, համոզվելու համար, որ որոշումը համապատասխանում է ADA և Արդար Բնակարանավորումն ուղեցույցների, ինչպես նաև HACLA-ի քաղաքականությանը:
3. Եթե Հաճախորդից պահանջվում է ավել տեղեկատվություն, Հաճախորդը պետք է ունենա մինչև 15 օրացուցային օր՝ տրամադրելու համար պահանջվող փաստաթղթերը HACLA-ին:
4. Երբ համապատասխան Տնօրենը (կամ իր կողմից նշանակված մեկը) ունի գործը վերանայելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, HACLA-ն ունի 30 օրացուցային օր՝ տրամադրելու Հաճախորդին իր դիմումի վերաբերյալ կայացրած որոշումը:
5. Եթե դիմումը մերժվում է, Հաճախորդը պետք է տեղեկացված լինի իր բողոքներ կայացնելու իրավունքի մասին, մերժման մասին տեղեկենալուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում:



**Հաշմանդամության և ողջամիտ բնակեցման  
քաղաքականությունն վրա հիմնված ոչ խտրականություն**

---

- B. Երկրորդ քայլ. Բողոք
1. Հաճախորդը կարող է ներկայացնել բողոքի հայցը Մատչելիության Համակարգողին իր դիմումի մերժման մասին ծանուցում ստանալուց հետո: Մերժումը ստանալու ժամկետից հետո Հաճախորդը ունի 30 օրացուցային օր բողոք ներկայացնելու համար:
  2. Մերժման վերջնական որոշումը պետք է տրամադրվի Հաճախորդին HACLA-ի կողմից բողոքի հայցը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
- C. Բողոքները կարող են ներկայացվել HACLA-ի Ողջամիտ Բնակեցում կամ Հաշմանդամության Խտրականություն Բողոքարկման ձևի (S504-08) միջոցով կամ այլ գրավոր ձևաչափով, որը կտրամադրի նույն տեղեկատվությունը, որը պահանջվում է HACLA-ի ձևով: Բողոքի ձևը առկա է HACLA-ի կայքում:
- D. Հաղորդակցվելով Հաճախորդի հետ բողոքարկման պրոցեսի ընթացքում, HACLA-ն հաշվի կառնի Հաճախորդի հաշմանդամությունը և դրա ազդեցությունը Հաճախորդի ժամկետների համապատասխանելու կարողության վրա:

### XIII. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- A. Մատչելիության Համակարգողը կպահպանի HACLA-ի՝ Մատչելիության Համակարգողի գրասենյակ ուղարկված բողոքների վերաբերյալ ֆայլերը և արձանագրությունները՝ ըստ դաշնային կանոնակարգերի:
- B. Ողջամիտ բնակեցման հայցերի վերաբերյալ բոլոր հաղորդակցություններն և փաստաթղթերը կպահպանվեն Հաճախորդի ֆայլում: Անձնակազմը պարտավոր է ապահովել, որպեսզի ողջամիտ բնակեցման հայցերի վերաբերյալ տվյալները թարմացվեն կիրառվող բիզնես ծրագրային համակարգում: